ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի հղումը. Ավետիսյան Թ., Թորոսյան Ա., Մաթևոսյան Դ. (2023), ՀՀ-ում երիտասարդների արտագաղթի սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները, մակրոտնտեսական ցուցանիշների հետ փոխառնչությունների գնահատումը, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 2(2), 143-169, DOI: 10.52174/29538114_2023.2-143
Ներկայացվել է խմբագրություն՝ 24.08.2023 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 04.09.2023 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝ 10.11.2023 թ.

ԹԱԴԵՎՈՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0001-6813-4062

ԱԼԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ասպիրանտ
https://orcid.org/0000-0002-5416-7565

ԴԻԱՆԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ
https://orcid.org/0000-0002-1219-7176

ՀՀ-ՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ, ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետությունում երիտասարդների էմիգրացիայի (արտագաղթ) պատճառները, սոցիալական, տնտեսական և ժողովրդագրական փոխառնչությունները համալիր ուսումնասիրելու նպատակով սույն հոդվածի շրջանակներում խմբավորվել և վերլուծվել են երիտասարդների արտագնա միգրացիայի առաջացման հիմնական գործոնները, դրանց փոխառնչությունները, առկա վիճակագրական տվյալների և կատարված հաշվարկային ցուցանիշների հիման վրա գնահատվել են ՀՀ-ում

երիտասարդների արտագաղթի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական բնութագրիչները՝ եկամուտների անհավասարություն, Ջինիի գործակից, աղքատության մակարդակ, աշխատաշուկան և բարձրագույն կրթության ոլորտը բնութագրող ցուցանիշներ, մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ, օտարերկրյա դրամական փոխանցումներ: Գնահատվել են նաև երիտասարդների միգրացիայի և ժողովրդագրական իրավիճակի տարածքային անհամաչափությունները, ըստ այդմ՝ հավաքական գնահատումներով կատարվել է մարզերի ժողովրդագրական իրավիճակի տարածքային վարկանշավորում: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ մարզերի անհամաչափ զարգացման հավաքական հետևանքներն էականորեն ազդում են միգրացիոն գործընթացների վրա: Սահմանամերձ լինելու հանգամանքը ևս էական ազդեցություն ունի, իսկ որոշ մարզերում առավել էական են բնակչության եկամուտներն ու բնակության պայմանների որակը:

Հաջորդիվ՝ գնահատվել են երիտասարդների էմիգրացիայի և մակրոտնտեսական ցուցանիշների կապերը, ըստ այդմ՝ կառուցվել է կոռելյացիոն մատրիցը, իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն և ստացվել է երիտասարդների էմիգրացիայի և մակրոտնտեսական ցուցանիշների կապն արտահայտող մոդելը: Իրականացվել են կանխատեսումներ (ARIMA մոդելով), ըստ որի՝ երիտասարդների էմիգրացիան ունեցել է կայուն նվազման միտում:

Հիմնաբառեր. *երիտասարդների միգրացիա, ժողովրդագրական իրավիճակ, միգրացիայի գործոններ, ARIMA մոդել*

JEL: J11, N30
DOI: 10.52174/29538114_2023.2-143

Ներածություն: Երիտասարդների միգրացիան դիտվում է աշխարհի գրեթե բոլոր զարգացող երկրներում[1,2], և վերջիններս ապահովում են բնակչության միգրացիոն հոսքերի զգալի մասը: Մասնավորապես՝ 15-24 տարիքային խմբին բաժին է ընկնում յուրաքանչյուր ութ էմիգրանտից մեկը[3]:

Երիտասարդների էմիգրացիան սոցիալական և տնտեսական երկարաժամկետ ազդեցություն ունի նաև Հայաստանի կայուն զարգացման վրա: Այս ոլորտի համալիր ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն միգրացիայի ուսումնասիրությունների ընդհանուր «խճանկարում», այլև դրա կանխարգելման առավել արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման տեսանկյունից:

Սույն հոդվածի հիմնական նպատակն է ուսումնասիրել տարբեր հեղինակների հետազոտություններն էմիգրացիայի վերաբերյալ՝ վեր հանելով և խմբավորելով վերջինս պայմանավորող հիմնական գործոնները, ինչպես նաև առկա վիճակագրական և հաշվարկային ցուցանիշների կիրառմամբ վերլուծել ՀՀ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները, գնահատել ՀՀ-ում երիտասարդների էմիգրացիայի առաջացման հիմնապատճառները, տարածքային

---

[1] Տե՛ս **Ginsburg C., Bocquier Ph., Afolabi S., Otiende M., Odhiambo F., Augusto O., Béguy D., Derra K., Wak G., Zabre P., Soura A., White M. J. & Collinson M. A.,** Determinants of internal migration in Africa: Does human capital necessarily end up in cities? Comparative analysis of health and demographic surveillance systems. Princeton University Paper, 2014, էջ 6–15:

[2] Տե՛ս **Awumbila M., Teye J. K., Litchfield J., Boakye-Yiadom L., Deshingkar P. & Quartey P.,** Are migrant households better off than non-migrant households? Evidence from Ghana. Migration Out of Poverty Working Paper No. 28, 2015, էջ 16–20:

[3] Տե՛ս UNICEF, 2014. Migration and youth: Challenges and opportunities. Edited by J. Cortina, P. Taran & A. Raphael on behalf of the GMG:

անհամաչափություններն ու առանձնահատկությունները, միտումները և կապը մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների հետ և կատարել կանխատեսումներ:

Գրականության ակնարկ: Տնտեսագետների շրջանում վերլուծվում և կարևորվում են միգրացիայի առաջացման բազմաթիվ և բազմաբնույթ պատճառներ: Մասնավորապես՝ միգրացիայի առաջացման պատճառների վերաբերյալ ամենահայտնի տեսություններից մեկը «Աշխատուժի միգրացիայի նոր տնտեսագիտություն» մոդելն է, որը կազմել են տնտեսագետներ Սթարքը[4] և Թեյլորը[5]: Ըստ այդ տեսության՝ միգրացիայի վրա ազդող գործոնները բաժանվում են երեք խմբի՝ մարդու անձնային գործոններ, ընտանիքի հետ կապված գործոններ և շրջապատող սոցիալ-տնտեսական պայմանների հետ կապված գործոններ:

Միգրացիայի վրա ազդող անձնական գործոններից մեկը տարիքն է: Տարիքի և միգրացիոն հակումների միջև փոխազդեցությունն ուսումնասիրվել և հիմնավորվել է ոլորտում հայտնի բազմաթիվ տնտեսագետների կողմից[6,7,8]: Ըստ այդ վերլուծությունների՝ երիտասարդ տարիքում մարդիկ ավելի շատ են հակված արտագաղթելու: Դա հիմնականում պայմանավորված է բնակչության շրջանում կարծրացած բարքերով և ավանդույթներով, որակյալ կրթություն ստանալու հնարավորության բացակայությամբ և ենթակառուցվածքների թերի զարգացվածությամբ: Մարդու տարիքի և նրա արտագաղթելու հակման միջև փոխազդեցության առանձնահատկությունն այն է, որ տարիքի ավելացման հետ մեկտեղ արտագաղթելու հակումն աճում և որոշակի տարիքում հասնում առավելագույն աստիճանի, որից հ սկսում է նվազել[9]: Դ. Հախվերդյանի և Տ. Վարդանյանի կատարած վերլուծությունը նույնպես հաստատում է, որ ՀՀ-ում միգրացիան ավելի սուր է արտահայտվում երիտասարդների շրջանում[10]:

Մարդու միգրացիոն հակումների վրա ազդող մեկ այլ անձնային գործոն է սեռը: Սեռի և նրա միգրացիոն հակումների միջև փոխազդեցության վերաբերյալ տնտեսագետներն իրենց մոտեցումներում ներհակ են: Որոշ տնտեսագետներ կարծում են, որ իգական սեռի ներկայացուցիչներն ավելի քիչ են հակված արտագաղթելու, որը պայմանավորված է կանանց վերարտադրողական ֆունկցիայով և ընտանիքում երեխաների խնամքի հիմնական պատաս-

---

[4] Տե՛ս **Stark O.,** The migration of labor. Cambridge, Basil Blackwell, 1991:

[5] Տե՛ս **Taylor E. J.,** The new economics of labour migration and the role of remittances in the migration process. International Migration, 37(1), 1999, էջ 66–67:

[6] Տե՛ս **Bell M.** & **Charles-Edwards E.,** Measuring internal migration around the globe: A comparative analysis. Knomad Working Paper No. 3. Global Knowledge Partnership on Migration and Development, 2014, էջ 15–18:

[7] Տե՛ս **Bell M.** & **Muhidin S.,** Cross-national comparisons of internal migration. Human Development Research Paper. 2009/30, New York, UNDP, 2009, էջ 13-15:

[8] Տե՛ս **Ackah Ch. & Medvedev D.,** Internal migration in Ghana: Determinants and welfare impacts. Background paper for the 2010 World Bank Ghana Poverty Assessment. WB, 2010, էջ 7–8:

[9] Տե՛ս նույն տեղը:

[10] Տե՛ս **Հախվերդյան Դ., Վարդանյան Տ.,** Հայաստանի միգրացիոն հոսքերի համապարփակ վերլուծություն, «Բանբեր ՀՊՏՀ», N1, 2020, էջ 95-97:

խանատուն լինելու հանգամանքով[11]: Ավելի տարածված է դառնում հակառակ մոտեցումը, ըստ որի՝ հատկապես գյուղական բնակավայրերում կանանց իրավունքների ոտնահարումը, կարծրատիպերն ու ոչ առաջադեմ բարքերը խթանում են այդպիսի բնակավայրերից կանանց արտագաղթը[12]:

Մարդու կրթական մակարդակը և դրա բարձրացման ձգտումները նույնպես ազդում են անհատի միգրացիոն հակման վրա: Բարձր կրթական մակարդակ ունեցող մարդիկ հակված են արտագաղթելու, որն ավելի հաճախ դրսևորվում է զարգացող երկրներում: Զարգացող երկրներից բարձր որակավորում ունեցող մասնագետները, հատկապես՝ երիտասարդները, ձգտում են արտագաղթելու դեպի զարգացած երկրներ, որտեղ իրենց կրթական մակարդակով կարող են ապահովել ավելի բարձր եկամուտներ և կենսական պայմաններ[13,14]:

Անձնային առանձնահատկություններից զատ, մարդու միգրացիոն հակման և վերջնական որոշման վրա ազդում են նաև ընտանեկան գործոնները: Այդպիսի գործոններ են, օրինակ՝ ընտանիքի ղեկավարի սեռը, տարիքը և կրթությունը[15]: Ըստ տնտեսագետներ Ֆեռոնի և Ջիաններիի, եթե ընտանիքի ղեկավարը ավելի մեծ տարիքի է և ունի ցածր կրթական մակարդակ, ապա վերջինս ավելի քիչ է հակված ռիսկային գործոնների: Հետևաբար՝ նման դեպքում ընտանիքի ղեկավարը մեծ ներգործություն կունենա ընտանիքի մյուս անդամների վրա, որ վերջիններս ռիսկային գործողությունների նույնպես չդիմեն, այդ թվում՝ չփոխեն իրենց բնակության վայրը և չարտագաղթեն[16]:

Մարդու միգրացիոն հակման վրա ազդում են նաև ընտանիքի կազմը և կառուցվածքը: Եթե անհատն ապրում է մեծ ընտանիքում, որտեղ մեկ շնչի հաշվով ընտանեկան եկամուտներն ավելի ցածր են, ապա այդ անհատը հակված է արտագաղթելու[17]: Սա հատկապես վերաբերում է ընտանիքի երկրորդ կամ երրորդ արական սեռի զավակներին, ովքեր պարտավորվում են մեկնել արտագնա աշխատանքի, որպեսզի կարողանան ապահովել ընտանիքի կարիքները[18]:

Ընտանիքի անդամներից որևէ մեկի արտագաղթած լինելու հանգամանքը, իր հերթին, մեծացնում է միգրացիայի հավանականությունը: Նշված հանգամանքը պայմանավորված է նրանով, որ երբ ընտանիքի անդամներից մեկը գտնվում է արտերկրում, այդ ընտանիքի անդամները ընդունող երկրի մասին

---

[11] Տե՛ս **Awumbila M., Teye J. K., Litchfield J., Boakye-Yiadom L., Deshingkar P. & Quartey P.,** նշվ. աշխ., էջ 24-27:

[12] Տե՛ս **Zachariah K.C., Mathew E.T. & Irudaya R. S.,** Social, economic and demographic consequences of migration on Kerala. International Migration, 39(2), 2001, էջ 55-58:

[13] Տե՛ս European Communities. Push and pull factors of international migration: A comparative report. Theme 1 – General statistics, Luxembourg, Eurostat, 2000, էջ 64-70:

[14] Տե՛ս **Semiv L., Hvozdovych Y.,** The intellectual migration of the youth in Ukraine: the backgrounds for «brain circulation», Journal of International Studies, Vol. 5, No 2, 2012, էջ 74:

[15] Տե՛ս **Ferrone L. & Giannelli G. C.,** Household migration and child educational attainment: The case of Uganda. IZA Discussion Paper No. 8927, 2015, էջ 14-17:

[16] Տե՛ս նույն տեղը:

[17] Տե՛ս **Thorat V.A., Dhekale J.S., Patil H.K. & Tilekar S.N,** Determinants of rural-urban migration in Konkan Region of Maharastra. Agricultural Economics Research Review, 24, 2011, էջ 505-507:

[18] Տե՛ս **Taylor E. J.,** Migration: New dimensions and characteristics, causes, consequences and implications for rural poverty. In K.G. Stamoulis (ed.) Food, agriculture and rural development: Current and emerging issues for economic analysis and policy research. FAO, 2001, էջ 177:

ավելի տեղեկացված են լինում, որն էլ նվազեցնում է այդ երկիր տեղափոխվելու և սեփական կենսագործունեությունը կազմակերպելու անորոշությունները և վերաինտեգրման հնարավոր ծախսերը[19]:

Անհատին շրջապատող սոցիալ-տնտեսական պայմանները առաջնային և ուղղակի ազդեցություն ունեն նրա որոշումների կայացման գործընթացի վրա: Արտագաղթելու որոշում կայացնելը նույնպես բացառություն չէ և մեծապես կախված է անհատին շրջապատող միջավայրից: Այդպիսի հիմնական գործոններից են անհատի կենսագործունեության տնտեսական միջավայրը: Օրինակ՝ գյուղատնտեսության զարգացման մակարդակը, ռիսկերը և գյուղմթերքի գները մեծապես ազդում են գյուղական բնակավայրերում մարդկանց միգրացիայի մակարդակի վրա[20]: Գյուղատնտեսական զարգացման մակարդակի և երիտասարդների շրջանում միգրացիայի միջև փոխկապվածության հետազոտություն իրականացվել է նաև Վրաստանում: Արդյունքները ցույց են տվել, որ երիտասարդների զբաղվածությունը Վրաստանի գյուղատնտեսության ոլորտում ցածր է և խոչընդոտվում է մի շարք գործոններով, որոնք էլ, իրենց հերթին, առաջացնում են գյուղական բնակավայրերից միգրացիայի բարձր մակարդակ և կառուցվածքային գործազրկություն[21]:

Մարդուն շրջապատող միջավայրում աղքատության բարձր մակարդակը, եկամուտների մեծ բևեռվածությունը ևս կարող են ազդել միգրացիոն հակվածության մեծացման վրա: Աղքատության պատճառով մարդկանց համար սահմանափակվում են կրթական և առողջապահական որակյալ ծառայություններից օգտվելու հնարավորությունները, որն էլ ստեղծում է անբարենպաստ իրավիճակ աղքատությունից դուրս գալու համար[22]: Սոցիալ-առողջապահական ծառայությունների անհասանելիությունը մեծացնում է ինչպես էմիգրացիան, այնպես էլ իմիգրացիան (ներգաղթ), քանի որ իրենց երկրի խոշոր քաղաքները կամ այլ երկրներ հաճախ ընկալվում են որպես հնարավորությունների և բարեկեցության կենտրոններ, որն էլ մղում է հատկապես երիտասարդներին՝ արտագաղթելու իրենց բնակավայրերից[23]:

Զգալի է նաև երկրում զբաղվածության իրական մակարդակի և մարդկանց միգրացիոն հակումների միջև փոխկապվածությունը: Բազմաթիվ վերլուծություններ փաստում են, որ գործազուրկները, հատկապես՝ երկարաժամկետ գործազուրկները, ավելի են հակված արտագաղթելու[24]: Դրա հիմնական պատճառներ կարող են լինել սեփական երկրում բավարար վարձատրությամբ կայուն զբաղվածություն գտնելու դժվարությունները կամ անհնարինությունը: Այդ փաստը հաստատվել է նաև ՀՀ տնտեսության պարագայում: Մասնավո-

---

[19] Տե՛ս **Petrozziello A.,** Gender on the move: Working on the migration-development nexus from a gender perspective. Training Manual. UN Women, 2013, էջ 75-85:

[20] Տե՛ս **Van de Glind H.,** Migration and child labour – Exploring child migrant vulnerabilities and those of children left behind. Geneva, ILO–IPEC, 2010, էջ 4-5:

[21] Տե՛ս **Kharaishvili E., Chavleishvili M., Lobzhanidze M., Damenia N., Sagareishvili N.,** Problems of Youth Employment in Agricultural Sector of Georgia and Causes of Migration, International 8, 2017:

[22] Տե՛ս FAO. 2014. FAO's Strategic Objective 3: Reduce rural poverty, էջ 23-24:

[23] Տե՛ս **Herrera C**. & **Sahn D.,** Determinants of internal migration among Senegalese youth. New York, Cornell University, 2013, էջ 20-22:

[24] Տե՛ս **Besharov D. & Lopez M.,** Adjusting to a world in motion. Trends in global migration and migration policy. Oxford University Press, 2015, էջ 11-12:

ռապես, ըստ տնտեսագետներ Զ. Թադևոսյանի, Կ. Հակոբյանի, Դ. Գալոյանի և Լ. Աղաջանյանի՝ ՀՀ-ում էմիգրանտների մեծ մասը տնտեսական միգրանտներ են, որոնք Հայաստանից մեկնում են աշխատանք և բարեկեցիկ կյանք որոնելու[25]:

Ամփոփելով կարելի է եզրակացնել. միգրացիայի վրա ազդող բազմաշերտ գործոնների ամբողջական ուսումնասիրությունը պահանջում է հաշվի առնել ինչպես անհատական որոշումները պայմանավորող միկրոմակարդակի հիմնական բնութագրիչները, այնպես էլ մակրոմակարդակի զարգացման համակարգային միջավայրը, միտումները պայմանավորող հիմնական դրդապատճառները:

Հետազոտության մեթոդաբանություն: Ուսումնասիրություններում կիրառվել են վիճակագրական վերլուծության հետևյալ գործիքները՝ դինամիկ շարքի ցուցանիշներ, դինամիկ շարքի բաշխման ցուցանիշներ, կառուցվածքային վերլուծություն, կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն, տեխնիկական վերլուծություն, նորմավորում, դասակարգում, վարկանշավորում:

Իրականացված հետազոտության շրջանակներում բնակչության էմիգրացիայի թիրախ է ընտրվել 15–34 տարիքային խումբը: Միգրանտների մեջ բնակչության 15–34 տարիքային խումբը դիտարկվել է որպես երիտասարդ միգրանտ: ՀՀ վիճակագրական կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՎԿ) հրապարակումներում նշված տարիքային խմբում գտնվող միգրանտների վերաբերյալ առանձին հավաքագրված վիճակագրական տվյալներ չկան: Ուստի, հետազոտության շրջանակներում առանձնացված թիրախային խմբին վերաբերող տվյալները հաշվարկելու և ստանալու համար իրականացրել ենք կոհորտային վերլուծություն (cohort-component analysis): Մասնավորապես, կատարել ենք ուղղակի հաշվարկ՝ համադրելով ՀՀ ՎԿ պաշտոնական վիճակագրության մի քանի աղբյուրի ցուցանիշները[26]: Այսպես՝ նախ հաշվարկվել է 15–34 տարիքային խմբի բնակչության թվաքանակի ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանի (տարվա) ցուցանիշների տարբերությունը: Դա կարելի է ներկայացնել որպես բնական և միգրացիոն շարժերի հանրագումար: Բնական շարժը կարող ենք ընդունել որպես մահացածների թիվ, քանի որ դիտարկում ենք բնակչության 15+ տարիքային խումբը, որտեղ ծնվածների թվի փոփոխությունը բնական շարժի վրա ազդեցություն չունի: Ծնվածների թիվը բնական շարժի վրա ունի ազդեցություն, եթե դիտարկենք 0+ տարիքային խումբը: 15–34 տարիքային խմբի բնակչության թվաքանակի ընթացիկ և նախորդ ժամանակահատվածի ցուցանիշների տարբերությունից նվազեցնելով (բացառելով) մահացածների թիվը՝ ստացել ենք այդ տարիքային խմբում միգրանտների գնահատված ցուցանիշը:

Երևան քաղաքը և մարզերն ըստ ժողովրդագրական իրավիճակի վարկանշավորելու նպատակով վերցվել են ժողովրդագրական չորս հիմնական ցուցանիշները՝ ծնելիություն, մահացություն, բեռնվածություն, միգրացիա-

---

[25] Տե՛ս **Թադևոսյան Զ., Հակոբյան Կ., Գալոյան Դ., Աղաջանյան Լ.,** Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ, «Ամբերդ» մատենաշար, N4, «Տնտեսագետ», 2014, էջ 67:

[26] Տե՛ս **Kashnitsky I.**, Russian periphery is dying in movement: a cohort assessment of internal youth migration in Central Russia. *GeoJournal*, 85(1), 2018, էջ 173–185, Doi:https://doi.org/10.1007/s10708-018-9953-5

բնակչություն հարաբերակցություն: Ցուցանիշները նորմավորման բանաձևի միջոցով բերվել են [1-5] միջակայքի՝ լավից վատ տրամաբանությամբ: Արդյունքում՝ չորս ցուցանիշների գծով յուրաքանչյուր մարզ ստացել է [1-5] միջակայքից միավոր, որոնց հանրագումարով կազմվել է ժողովրդագրական իրավիճակի վարկանշավորման աղյուսակը:

Երիտասարդների էմիգրացիայի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունը գնահատելու նպատակով կառուցվել են ռեգրեսիոն մոդելներ, ընդ որում՝ ժամանակային շարքերի մոտեցմամբ մոդելավորման համար կիրառվել է ARIMA դասի մոդելը, որը օգտագործվել է կանխատեսումներ իրականացնելու նպատակով:

Վերլուծություն

ՀՀ-ում երիտասարդների արտագաղթի միտումները և սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները

ՀՀ-ում երիտասարդների միգրացիայի վրա ազդող գործոններն ուսումնասիրելու համար նախ անհրաժեշտ է հաշվարկել երիտասարդ միգրանտների թվաքանակը: Մեթոդաբանություն բաժնում ներկայացված համապատասխան մեթոդով հաշվարկի արդյունքում ստացել ենք ՀՀ-ից երիտասարդ միգրանտների թվի դինամիկան բնութագրող ցուցանիշների ժամանակային շարքը: Ուսումնասիրության պահին ՀՀ ՎԿ հրապարակած վերաբերելի ցուցանիշներն ավարտվում են 2021 թվականով:



Գծապատկեր 1. ***Երիտասարդների էմիգրացիան ՀՀ-ում, 2013–2021 թթ.*** [27]

Ըստ գծապատկեր 1-ի՝ 15–34 տարիքային միջակայքում գտնվող միգրանտների առավելագույն թիվը գրանցվել է 2016 թվականին՝ 28,660, որը պայմանավորված էր ապրիլյան քառօրյա պատերազմով: Նվազագույն արժեքը գրանցվել է 2020 թվականին՝ 13,914 մարդ, որը հիմնականում պայմանավորված է եղել COVID-19 համավարակի սահմանափակումներով: Դիտարկվող ժամանակահատվածում միջին արժեքը 22,199 մարդ է: Միջին հավելաճի տեմպը կազմել է -0.6%, ըստ որի՝ դիտարկվող ժամանակահատվածում միգրացիոն հոսքը տարեկան, միջին հաշվով, նվազել է 0.6%-ով: Նշյալը, ընդհանուր առմամբ, կարելի է գնահատել որպես ոչ էական դրական միտում: Մասնավորապես՝ ըստ տարիների արձանագրվել է հետևյալ պատկերը. պաշտոնական տվյալներով՝ 2021 թվականին միգրացիան աճել է 28.7%-ով՝ նա-

[27] Հաշվարկել են հեղինակները՝ օգտագործելով Հայաստանի ժողովրդագրական ժողովածուների տվյալները (2008–2022), ՀՀ ՎԿ կայքէջ:

խորդ տարվա համեմատությամբ: Դիտարկվող ժամանակահատվածում առավելագույն հավելաճը գրանցվել է 2015 թվականին՝ 5,448 մարդ, նվազագույնը 2020 թվականին՝ -9,841: Դիտարկվող ժամանակահատվածի սկզբի նկատմամբ արձանագրվել է երիտասարդ միգրանտների թվի նվազում՝ 5.1%-ով:

Տեսական մակարդակում և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով[28,29,30], որպես էմիգրացիա առաջացնող առաջնային մակրոգործոն կարելի է առանձնացնել եկամուտների անհավասար բաշխվածությունը բնակչության տարբեր խմբերի միջև: Հետազոտության հաջորդ բաժնում ՀՀ պաշտոնական վիճակագրական տվյալների հիման վրա իրականացված՝ երիտասարդների արտագնա միգրացիայի գործոնային վերլուծությունը և ստացված կանխատեսման մոդելը ևս բացահայտել են, որ միգրացիայի առաջնային և հիմնական գործոնը եկամուտների անհավասար բաշխվածությունն է: Ի դեպ, միջազգային ճանաչում ունեցող շատ հեղինակներ պնդում են, որ բնակչության տարբեր խմբերի միջև եկամտի անհավասար բաշխվածությունը բնակչության իմիգրացիա առաջացնող հիմնական պատճառն է[31]:

Ուստի, առաջնային ենք համարել ՀՀ-ում երիտասարդների շրջանում էմիգրացիայի և եկամուտների անհավասար բաշխվածության փոխառնչության ուսումնասիրությունը: Այս նպատակով ուսումնասիրվել է եկամուտների անհավասարությունը բնութագրող ամենատարածված ցուցանիշը՝ Ջինիի գործակիցը (գծապատկեր 2): Ինչպես տեսնում ենք, Ջինիի գործակիցը 2013 թվականին 30.6-ից դինամիկ աճել է և 2018 թվականին հասել ուսումնասիրվող ժամանակահատվածում իր առավելագույն արժեքին՝ 34.4:



Գծապատկեր 2. ***Ջինիի գործակիցը և 15–34 տարեկան էմիգրանտների թվաքանակը ՀՀ-ում, 2013–2021 թթ.*** [32]

---

[28] Տե՛ս **Giroux S.,** Rural parentage and labor market disadvantage in a sub-Saharan setting: Sources and trends. Rural Sociology, 73, 2008, էջ 369–399:

[29] Տե՛ս **Ravallion M., Chen Sh. & Sangraula P.,** New evidence on the urbanization of global poverty. World Bank Policy Research Working Paper No. 4199, WB, 2007, էջ 24-26:

[30] Տե՛ս **Nguyen B. T., Albrecht J. W., Vroman S. B. & Westbrook M. D.,** A quantile regression decomposition of urban-rural inequality in Vietnam. Journal of Development Economics, Elsevier, 83(2), 2007, էջ 480:

[31] Տե՛ս **Giroux S.,** նշվ. աշխ., էջ 369-399:

[32] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-դեկտեմբերին (2008–2022):

Այնուհետև Ջինիի գործակիցը սկսել է կտրուկ նվազել մինչև 2020 թվականը՝ հասնելով ուսումնասիրվող ժամանակահատվածի իր նվազագույն արժեքին՝ 25.1: Ջինիի գործակցի հետևողական աճը մինչև 2018 թվականը, որն ուղեկցվել է միգրացիայի համանման աճով, հուշում է, որ եկամուտների անհամամասնությունների ընդլայնումը կարող է խթանել արտագաղթը:

Նույն դինամիկան նկատելի է նաև 2018–2020 թվականների ընթացքում, երբ ինչպես Ջինիի գործակիցը, այնպես էլ երիտասարդ էմիգրանտների թվաքանակը նվազման միտում են ունեցել:

Այսպիսով կարելի է եզրակացնել՝ եկամուտների ընդհանուր աճն ինքնին չի կարող թուլացնել երիտասարդների շրջանում էմիգրացիայի հակվածությունը: Առավել առաջնային է եկամուտների բաշխվածության հավասարության մակարդակը: Այլ կերպ ասած՝ ՀՀ-ում էմիգրացիայի հակումներն ու փաստացի աճի միտումները թուլացնելու համար առավել մեծ կարևորություն և շոշափելի ազդեցություն ունի ցածր եկամուտներ ունեցող երիտասարդների եկամուտների առաջանցիկ աճի ապահովումը:

Ինչպես արդեն պարզել ենք, մարդկանց միգրացիոն հակումների վրա ազդող մեկ այլ կարևոր մակրոգործոն է երկրի սոցիալ-տնտեսական զարգացվածության աստիճանը: Աշխարհի զարգացած երկրները համարվում են միգրանտներին ընդունող (ռեցիպիենտ) երկրներ, իսկ զարգացող երկրները՝ միգրանտների դոնոր երկրներ: Ուստի, կարևորվել է նաև երկրի զարգացման աստիճանը՝ որպես միգրացիոն հակման վրա ազդող գործոնի ուսումնասիրություն:

ՀՀ տնտեսական զարգացման աստիճանը բնութագրելու համար որպես հիմնական ցուցանիշ է դիտարկվել բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն: Գծապատկեր 3-ում ներկայացված են 2013–2021 թվականներին մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն և երիտասարդ էմիգրանտների թվաքանակը ՀՀ-ում:



Գծապատկեր 3. ***Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն և 15–34 տարեկան էմիգրանտների թվաքանակը ՀՀ-ում, 2013–2021 թթ.*** [33]

Գծապատկեր 3-ից պարզ է դառնում, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ-ում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն դրսևորել է որոշակի աճի միտում: Միայն 2020 թվականին է, որ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կտրուկ նվազել է՝ պայմանավորված է COVID-19 համավարակի և 44-օրյա պատերազմի սոցիալ-

[33] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, Հայաստանի ազգային հաշիվները (2013–2021):

տնտեսական բացասական հետևանքներով: Ուսումնասիրվող ժամանակահատվածում մեկ շնչի հաշվով ՀՆԱ նվազագույն արժեքը գրանցվել է 2015 թվականին՝ կազմելով 3666.1 ԱՄՆ դոլար, իսկ առավելագույն արժեքը գրանցվել է 2021 թվականին՝ կազմելով 4966.5 ԱՄՆ դոլար: Միևնույն ժամանակ, ուսումնասիրվող ժամանակահատվածում, մեկ շնչի հաշվով ՀՆԱ և միգրացիայի ցուցանիշների դինամիկան ոչ միշտ է դրսևորել հակառակ վեկտորական ուղղվածություն: 2013–2016 թվականներին, չնայած մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճին, երիտասարդների էմիգրացիայի տեմպերը նույնպես աճել են: Դա վկայում է այն մասին, որ այդ տարիներին տնտեսական աճի դրական ազդեցությունները ստվերվել են այլ նշանակալի գործոններով, այդ թվում՝ եկամուտների անհավասար բաշխվածությամբ պայմանավորված: Հատկանշական է, որ, կարճաժամկետ առումով, մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճը չի կարող էական ազդեցություն ունենալ միգրացիայի վրա՝ հաշվի առնելով ՀՀ տնտեսության և զարգացած երկրների տնտեսությունների միջև դեռևս առկա մեծ խզվածությունը: Հետևաբար՝ նույնիսկ կարճաժամկետ հատվածում մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճը չի կարող էականորեն ազդել այն մարդկանց որոշումների վրա, ովքեր ցանկանում են տեղափոխվել և մշտական բնակություն հաստատել այլ երկրներում՝ կայուն և բարեկեցիկ կյանքի ձգտումով:

Պատմականորեն աղքատությունը միգրացիան խթանող առաջնային գործոն է: Աղքատության պայմաններում ապրող մարդիկ ունեն նյութական բարեկեցության, ծառայությունների մատչելիության սահմանափակ հնարավորություններ: ՀՀ-ում աղքատության մակարդակի և երիտասարդների էմիգրացիայի փոխկապվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աղքատության մակարդակը նվազման միտում ունեցել է 2013–2018 թվականների ընթացքում՝ 32%-ից հասնելով 23.5%-ի, որից հետո աճել է մինչև 2020 թվական՝ հասնելով 27%-ի: 2021 թվականին այդ ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է և կազմել 26.5%: Ուսումնասիրվող ժամանակահատվածում աղքատության առավելագույն մակարդակը գրանցվել է 2013 թվականին 32%, իսկ նվազագույն մակարդակը՝ 2018 թվականին՝ 23.5% (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. ***Աղքատության մակարդակը և 15–34 տարեկան էմիգրանտների թվաքանակը ՀՀ-ում, 2013–2021 թթ.*** [34]

[34] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-դեկտեմբերին (2008–2022):

Երիտասարդ էմիգրանտների թվաքանակի և աղքատության մակարդակի փոխառնչության առումով կարելի է պնդել, որ երիտասարդների միգրացիայի ակտիվացումը, որպես կանոն, հանգեցնում է աղքատության մակարդակի անկման, և հակառակը: Սակայն 2016–2018 թվականներին գրանցվել է միգրացիայի և աղքատության միաժամանակյա անկում:

Աշխատանքային եկամուտները բնակչության եկամուտների հիմնական աղբյուրն են: Աղքատության մակարդակը, ինչպես նաև եկամուտների անհավասարության խնդիրը պայմանավորված են բնակչության գործազրկության մակարդակով: Գործազրկության մակարդակի աճը մեծացնում է միգրացիոն հակումները, հատկապես՝ երիտասարդության շրջանում: 2013 թվականին գործազրկության մակարդակը 16.18%-ից աճել է՝ 2015 թվականին հասնելով 18.26%-ի, 2016–2017 թվականներին փոքր-ինչ նվազել է, իսկ հետո՝ մինչև 2021 թվականը, նվազել է զգալիորեն՝ հասնելով 10.01%-ի (գծապատկեր 5): Ուսումնասիրվող ժամանակահատվածում գործազրկության մակարդակը ՀՀ-ում առավելագույն արժեքն ունեցել է 2015 թվականին՝ 18.26%, իսկ նվազագույն արժեքը՝ 2021 թվականին՝ 10.01%:



Գծապատկեր 5. ***Գործազրկության մակարդակը և 15–34 տարեկան էմիգրանտների թվաքանակը ՀՀ-ում, 2013–2021 թթ.*** [35]

2016–2018 թվականներին միգրացիայի և աղքատության միաժամանակյա անկումը կարելի է բացատրել հենց գործազրկության մակարդակի անկմամբ:

Ե՛վ միգրացիայի, և՛ գործազրկության մակարդակի աճը 2013–2015 թվականներին ցույց է տալիս, որ զբաղվածության մարտահրավերները եղել են երիտասարդների արտագաղթի շարժիչ գործոնը: 2018–2021 թվականներին գործազրկության մակարդակի նվազման միտումը ուղեկցվել է միգրացիայի նվազմամբ: Սակայն երիտասարդների էմիգրացիա - գործազրկության մակարդակ ուղղակի կապը բավականին թույլ է արտահայտված, քանի որ դիտարկվող ժամանակահատվածում այլ գործոններն առավել զգալի դերակատարում են ունեցել:

Բնակչության զբաղվածության և միգրացիայի կապն ուսումնասիրելիս շատ կարևոր է հաշվի առնել նաև աշխատավարձերի մակարդակը: Աշխատա-

[35] Տե՛ս նույն տեղը:

վարձը կարող է դիտարկվել իբրև անհատի տնտեսական բարեկեցության անմիջական ցուցիչներից մեկը: Առավել բարձր աշխատավարձի և սոցիալական վիճակի բարելավման ձգտումը ևս էմիգրացիոն որոշումների հիմք է: Ուսումնասիրվող ողջ ժամանակահատվածում միջին անվանական աշխատավարձն աճել է՝ 2013 թվականի 146524 դրամից 2021 թվականին դառնալով 204048 դրամ: Միջին աշխատավարձի աճի ամենաբարձր տեմպը գրանցվել է 2014 թվականին՝ 8.23%, իսկ ամենացածրը՝ 2016 թվականին՝ 1.65% (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. ***Միջին ամսական անվանական աշխատավարձը և 15–34 տարեկան էմիգրանտների թվաքանակը ՀՀ-ում, 2013–2021 թթ.*** [36]

Միջին աշխատավարձի և երիտասարդների էմիգրացիայի տեմպերի միջև հակադարձ կապ է գրանցվել միայն 2020 թ, այն դեպքում, երբ դիտարկվող ժամանակահատվածում, միջին աշխատավարձի աճին զուգընթաց, երիտասարդ միգրանտների թվաքանակը նույնպես աճել է: Սա վկայում է այն մասին, որ ինչպես մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի դեպքում, այնպես էլ միջին աշխատավարձի պարագայում միգրացիայի վրա կարճաժամկետ ազդեցությունը բավականին թույլ է: Մյուս կողմից՝ անվանական վարձատրության աճից զատ, կարևոր են գնաճն ու իրական վարձատրության փոփոխությունները: Բացի այդ, երիտասարդների էմիգրացիայի որոշումները պայմանավորված են նաև ընդունող երկրում ակնկալվող իրական վարձատրության և սեփական երկրում ստացվող փաստացի վարձատրության տարբերություններով և աշխատանքային այլ պայմաններով ու կարիերայի հեռանկարներով: Այսինքն՝ երիտասարդը, ձգտելով նույն աշխատանքի դիմաց ավելի մեծ աշխատանքային եկամուտների, արտագաղթում է ավելի զարգացած երկրներ:

Տարբեր հեղինակների կողմից կատարված հետազոտությունների վերլուծությունները փաստում են միգրացիայի և արտերկրից ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների միջև ուղղակի կապի և առաջնային փոխառնչության մասին[37,38]: Այսպես՝ ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ուղարկ-

[36] Տե՛ս նույն տեղը:

[37] Տե՛ս **Garip F.,** An Integrated Analysis of Migration and Remittances: Modeling Migration as a Mechanism for Selection. Population Research and Policy Review. Volume 31, 2012, էջ 637-663:

[38] Տե՛ս **Cohen J.H.,** Migration, Remittances, and Household Strategies. Annual Review of Anthropology. Vol. 40, 2011, էջ 103-114:

ված դրամական փոխանցումները 2013–2016 թվականներին նվազել են՝ 2159.6 միլիոն ԱՄՆ դոլարից հասնելով 1330.1 միլիոն ԱՄՆ դոլարի (գծապատկեր 7): 2016–2019 թվականներին գրանցվել է աճ, որը կազմել է 1489.5 միլիոն ԱՄՆ դոլար, այնուհետև, համավարակով պայմանավորված տնտեսական անկումների հետևանքով, 2020 թվականին դրամական փոխանցումների ծավալը կտրուկ նվազել է: 2021 թվականին դրամական փոխանցումների աճի տեմպը վերականգնվել է՝ հասնելով 1559.2 միլիոն ԱՄՆ դոլարի:

Միգրացիոն հոսքերի վրա դրամական փոխանցումների ազդեցությունը միանշանակ գնահատականի չի կարող արժանանալ, քանի որ մի կողմից՝ երբ միգրացիոն հոսքերն ավելանում են, ավելի մեծ է հավանականությունը, որ դրամական հոսքերի ծավալը կմեծանա, սակայն, մյուս կողմից՝ ինչպես ցույց են տալիս Հերերայի և Սահնի ուսումնասիրությունները[39], ընտանիքի մեկ անդամի արտագաղթած լինելու հանգամանքը մեծացնում է ընտանիքի վերամիավորման նպատակով մյուս անդամների արտագաղթի հավանականությունը: Հետևաբար՝ երբ միգրանտների թվաքանակն ավելանում է, կա նաև իրական հավանականություն, որ որոշ դեպքերում դա նաև ընտանիքների վերամիավորման արդյունքում է տեղի ունենում: Այս պարագայում էմիգրացիայի աճը կարող է ուղեկցվել օտարերկրյա դրամական փոխանցումների համապատասխան նվազմամբ: Կարծում ենք՝ գծապատկեր 7-ում արձանագրված հակասական միտումները կարելի է բացատրել նաև այդ հիմնավորմամբ:



Գծապատկեր 7. ***Դեպի ՀՀ օտարերկրյա դրամական փոխանցումները և 15–34 տարեկան էմիգրանտների թվաքանակը ՀՀ-ում, 2013–2021 թթ.***[40]

Ամփոփելով հանգում ենք այն եզրահանգման, որ ՀՀ-ում երիտասարդների էմիգրացիայի վրա ազդող գործոնները հիմնականում դրսևորել են փոխկապակցված բնույթ, սակայն COVID-19 համավարակի, քառօրյա և քառասունչորսօրյա պատերազմի հետևանքներով պայմանավորված՝ երիտասարդների միգրացիայի և ընտրված մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների դինամիկայի փոխառնչությունները դրսևորել են հակադարձ միտումներ: Ուստի, սույն հետազոտության շրջանակներում կարևորվել է նաև երիտասարդների էմիգրացիայի միտումների և շարժառիթների, երիտասարդների էմիգրա-

[39] Տե՛ս **Herrera C. & Sahn D.,** նշվ. աշխ., էջ 20-22:

[40] Տե՛ս ՀՀ ԿԲ կայքէջ, Վիճակագրություն, Արտաքին հատվածի վիճակագրություն, Դեպի ՀՀ դրամական փոխանցումները ըստ վճարային հաշվեկշռի (2013–2021):

ցիայի տարածքային անհամաչափությունների և առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Երիտասարդների միգրացիայի և մակրոտնտեսական ցուցանիշների ընդհանուր՝ վերը բերված վերլուծության ամփոփ արդյունքներով առանձնացվել և ստորև առավել խորքային վերլուծվել են առավել ընդգծված փոխառնչություններ ունեցող ցուցանիշները:

ՀՀ-ում երիտասարդների միգրացիայի և ժողովրդագրական իրավիճակի տարածքային անհամաչափություններն ու միտումները

Ագրեգացված պատկեր ստանալու համար ՀՀ մարզերը դասակարգվել են ժողովրդագրական չորս ցուցանիշների հիման վրա՝ ծնելիության տեմպ, մահացության տեմպ, բեռնվածության գործակից, երիտասարդ միգրանտների թվաքանակի տեսակարար կշիռ բնակչության ընդհանուր թվաքանակում: Դասակարգման համար բոլոր չորս ցուցանիշների արժեքները բերվել են [1-5] միջակայք, որտեղ 1-ը բնութագրում է ժողովրդագրական ամենադրական իրավիճակը, իսկ 5-ը՝ ամենաբացասական: Հետևաբար՝ հավաքական գնահատման պարագայում յուրաքանչյուր մարզի ժողովրդագրական իրավիճակի գնահատման միավորը կարող է լինել [4-20] միջակայքում, որտեղ 4-ին մոտ միավոր հավաքած մարզը ամենալավ ժողովրդագրական իրավիճակն ունեցողն է, իսկ 20-ին մոտ միավոր ունեցողը՝ ժողովրդագրական ամենավատ իրավիճակում գտնվողը: Միջակայքի բերելու համար օգտվել ենք նորմավորման հետևյալ բանաձևից.

$$a + \frac{X_i - X_{min}}{X_{max} - X_{min}} \times (b - a) \ , \qquad (1)$$

որտեղ՝ a-ն և b-ն բերման միջակայքի ծայրակետերն են:

Միայն ծնելիության ցուցանիշն է ուղղակի համեմատական ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, ուստի, այս ցուցանիշը գնահատման կիրառվող միջակայքում տեղավորելու համար հակադարձվել է «1/ցուցանիշ» բանաձևով: Արդյունքում ստացվում է, որ ամենաբարձր ծնելիություն ունեցող մարզը կստանա ամենափոքր միավորը, ինչը համապատասխանում է դասակարգման տրամաբանությանը և մեթոդաբանությանը:

Աղյուսակ 1

Ժողովրդագրական իրավիճակի տարածքային միտումների ագրեգացված գնահատման պատկերը, 2013–2021 թթ.[41]

Մարզ և Երևան	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Երևան	12	10	12	14	12	13	12	11	17
Արագածոտն	6	11	14	11	13	16	9	9	7
Արարատ	10	9	9	12	10	12	8	12	8
Արմավիր	7	11	7	9	10	9	6	10	7
Գեղարքունիք	9	9	7	11	7	12	6	9	8
Լոռի	17	11	17	16	15	15	10	9	14
Կոտայք	10	9	12	12	13	11	10	11	9
Շիրակ	9	11	13	16	15	13	11	9	13
Սյունիք	12	10	10	9	8	9	8	14	11
Վայոց ձոր	7	12	15	7	16	11	18	15	11
Տավուշ	14	14	16	13	9	15	9	12	13

[41] Հաշվարկել են հեղինակները՝ օգտագործելով Հայաստանի ժողովրդագրական ժողովածուների տվյալները (2008–2022), ՀՀ ՎԿ կայքէջ:

Աղյուսակ 1-ից երևում է, որ նվազագույն միավորը 6-ն է, այսինքն՝ դա ամենալավ ժողովրդագրական իրավիճակին համապատասխանող գնահատման միավորն է: Փաստացի՝ որևէ մարզում, դիտարկվող ժամանակահատվածում, բոլոր ցուցանիշների գծով առավելագույն դրական ժողովրդագրական պատկեր չի արձանագրվել:

Առավելագույն միավորը 18-ն է, որն արձանագրվել է 2018 թվականին Վայոց ձորի մարզում: Փաստորեն, բոլոր 4 ցուցանիշներով բացարձակ վատ ժողովրդագրական իրավիճակ ևս չի արձանագրվել, և առավելագույնը 3 ցուցանիշի գծով են ստացել գնահատման վատագույն միավորներ:

Այնուհետև, դիտարկվող ժամանակահատվածում, ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ժողովրդագրական իրավիճակի ամփոփ գնահատման միջին տարեկան արդյունքները դասակարգվել են բացասականից դրական, և ստացվել է մարզերի ժողովրդագրական իրավիճակի վարկանշավորումը:

Աղյուսակ 2

ՀՀ մարզերի և Երևանի ժողովրդագրական իրավիճակի վարկանշավորումը, 2013–2021 թթ.[42]

Դիրք	Մարզ
1	Լոռու
2	Տավուշի
3	ք. Երևան
4	Շիրակի
5	Վայոց ձորի
6	Արագածոտնի
7	Կոտայքի
8	Արարատի
9	Սյունիքի
10	Արմավիրի
11	Գեղարքունիքի

Աղյուսակ 3

Երիտասարդների էմիգրացիայի տարածքային կառուցվածքը[43]

Մարզ և Երևան	Միջին տես. կշիռ
Երևան	35%
Արագածոտն	5%
Արարատ	9%
Արմավիր	8%
Գեղարքունիք	7%
Լոռի	8%
Կոտայք	8%
Շիրակ	10%
Սյունիք	5%
Վայոց ձոր	2%
Տավուշ	4%
Ընդամենը	**100%**

Աղյուսակ 2-ից երևում է, որ հետազոտվող ժամանակահատվածում վերը դիտարկված ցուցանիշների միտումների հիման վրա հաշվարկված միավորներով միջինում ամենավատ ժողովրդագրական իրավիճակն արձանագրած եռյակում են Լոռին, Տավուշը, Երևանը: Միջինում ամենալավ ժողովրդագրական իրավիճակն արձանագրած եռյակում են Գեղարքունիքը, Արմավիրը, Սյունիքը:

Աղյուսակ 3-ում ներկայացված են դիտարկվող ժամանակահատվածում երիտասարդ միգրանտների թվաքանակի տեսակարար կշիռներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի: Այսպես՝ 2013–2021 թվականին միջինում բոլոր միգրանտների 35%-ը Երևանից են, 10%-ը՝ Շիրակի մարզից, 9%-ը՝ Արարատի մարզից և այլն:

---

[42] Հաշվարկել են հեղինակները:

[43] Հաշվարկել են հեղինակները՝ օգտագործելով Հայաստանի ժողովրդագրական ժողովածուների տվյալները (2008–2022), ՀՀ ՎԿ կայքէջ:

Աղյուսակ 4

Երիտասարդների միգրացիայի, բնակության պայմանների և եկամուտների միջև կոռելյացիան՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի[44]

	Բնակության պայմաններ (1–5)	*Եկամուտներ*
Երևան	**0.60**	(0.28)
Արագածոտն	**0.85**	(0.47)
Արարատ	0.39	(0.38)
Արմավիր	0.46	(0.18)
Գեղարքունիք	**0.54**	**(0.57)**
Լոռի	**0.91**	**(0.85)**
Կոտայք	0.47	(0.38)
Շիրակ	0.33	**(0.78)**
Սյունիք	(0.29)	0.81
Վայոց ձոր	(0.20)	0.08
Տավուշ	**0.59**	(0.27)
ՀՀ	**0.68**	**(0.52)**

Աղյուսակ 4-ում բերված են երիտասարդների միգրացիա – բնակության պայմաններ, երիտասարդների միգրացիա – եկամուտ կոռելյացիայի գործակիցներն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ընդհանուր՝ հանրապետական մակարդակում:

Սահմանամերձ լինելու հանգամանքով պայմանավորված՝ երիտասարդների միգրացիայի մասին քանակական գնահատական ունենալու նպատակով դիտարկվել է սահմանամերձ մարզերի և ոչ սահմանամերձ բնակավայրերում երիտասարդ միգրանտների և բնակչության ընդհանուր թվաքանակների հարաբերության դինամիկան (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. ***Սահմանամերձ և ոչ սահմանամերձ բնակավայրերում երիտասարդ միգրանտների և բնակչության ընդհանուր թվաքանակների հարաբերության դինամիկան, 2013–2021 թթ.[45]***

Գծապատկեր 8-ից երևում է, որ 2020 թվականի և հետագա շոկերով պայմանավորված՝ սահմանամերձ մարզերից միգրացիայի միջին հավելաճի տեմպն աճել է ոչ սահմանամերձի համեմատությամբ:

---

[44] Հաշվարկել են հեղինակները՝ օգտագործելով ՀՀ ՎԿ կայքէջի Միկրոտվյալներ. տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան, https://armstat.am/en/?nid=205

[45] Հաշվարկել են հեղինակները՝ օգտագործելով Հայաստանի ժողովրդագրական ժողովածուների տվյալները (2008–2022), ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ:

Երիտասարդների արտաքին միգրացիայի դինամիկայի մոդելավորումը

Երիտասարդների էմիգրացիայի ինտենսիվության և մակրոտնտեսական ցուցանիշների կապի վերաբերյալ կոռելյացիոն[46] վերլուծության արդյունքում ունենք հետևյալ փոխառնչությունները (աղյուսակ 5).

Աղյուսակ 5

Երիտասարդների էմիգրացիայի և մակրոտնտեսական ցուցանիշների կոռելյացիոն[47] մատրից[48]

Կոռելյացիոն մատրից	*Միգրացիա*	*Ջինիի գործակից*	*Գործազրկության մակարդակ*	*Մեկ շնչի հաշվով ՀՆԱ*	*Աղքատության մակարդակ*	*Ծայրահեղ աղքատ*	*Ոչ աղքատ*	*Միջին աշխատավարձ*	*Նվազագույն աշխատավարձ*	*Միջին/նվազագույն աշխատավարձ*
Միգրացիա	1.0	0.8	0.6	(0.5)	(0.1)	0.1	0.1	(0.2)	(0.4)	0.6
Ջինիի գործակից	0.8	1.0	0.6	(0.5)	(0.1)	0.3	0.1	(0.5)	(0.7)	0.7
Գործազրկության մակարդակ	0.6	0.6	1.0	(0.9)	0.5	0.6	(0.5)	(0.7)	(0.7)	0.4
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ	(0.5)	(0.5)	(0.9)	1.0	(0.6)	(0.6)	0.6	0.7	0.6	(0.3)
Աղքատության մակարդակ	(0.1)	(0.1)	0.5	(0.6)	1.0	0.9	(1.0)	(0.6)	(0.5)	0.2
Ծայրահեղ աղքատ	0.1	0.3	0.6	(0.6)	0.9	1.0	(0.9)	(0.7)	(0.7)	0.5
Ոչ աղքատ	0.1	0.1	(0.5)	0.6	(1.0)	(0.9)	1.0	0.6	0.5	(0.2)
Միջին աշխատավարձ	(0.2)	(0.5)	(0.7)	0.7	(0.6)	(0.7)	0.6	1.0	0.9	(0.5)
Նվազագույն աշխատավարձ	(0.4)	(0.7)	(0.7)	0.6	(0.5)	(0.7)	0.5	0.9	1.0	(0.8)
Միջին/նվազագույն աշխատավարձ	0.6	0.7	0.4	(0.3)	0.2	0.5	(0.2)	(0.5)	(0.8)	1.0

- Հակադարձ կապ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և միգրացիայի միջև, այսինքն՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճն ուղեկցվում է միգրացիայի կրճատմամբ,
- միգրացիա–միջին աշխատավարձ հակադարձ կապ, սակայն էապես թույլ և ոչ նշանակալի,
- միգրացիա–նվազագույն աշխատավարձ հակադարձ, սակայն չափավոր կապ,
- միգրացիա–միջին և նվազագույն աշխատավարձերի հարաբերակցություն. առկա է ուղիղ և էական կապ, որը նշանակում է՝ միջին և նվազագույն աշխատավարձերի միջև ճեղքվածքի խորացումը հանգեցնում է միգրանտների թվի աճի,

[46] Տե՛ս **Елисеева И. И. и др.** , Статистика: учеб. 1. М., «Проспект», 2010, 448 էջ:
[47] Պիրսոնի կոռելյացիայի գործակիցներ:
[48] Հեղինակների հաշվարկներ:

- միգրացիա–Ջինիի գործակից. առկա է ուժգին և ուղղակի կապ, որը նշանակում է՝ եկամուտների անհավասարությունը և բևեռացումն էական նպաստող գործոն են երիտասարդների միգրացիայի համար,
- միգրացիա–աղքատության մակարդակ կապը նշանակալի չէ,
- միգրացիա–գործազրկության մակարդակ. առկա է ուղիղ կապ, որը նշանակում է՝ գործազրկության մակարդակի աճը հանգեցնում է երիտասարդների միգրացիայի աճի: Իրականացված վերլուծությունների ամփոփ արդյունքներով ստացվել է երիտասարդների էմիգրացիայի և մակրոտնտեսական ցուցանիշների կապն արտահայտող մոդել[49] (բանաձև 2):

Աղյուսակից երևում է, որ մակրոտնտեսական ցուցանիշների միջև առկա է մուլտիկոլինեարություն՝ ռեգրեսորների միջև ուժեղ կոռելյացիա: Հետևաբար՝ մոդելավորման համար անհրաժեշտ է կիրառել Ֆիշերի գործոնների անջատման-միակցման չափանիշը: Մասնավորապես՝ առաջին քայլով վերցրել ենք բացատրվող փոփոխականի (երիտասարդների միգրացիա) հետ ամենամեծ կոռելյացիայի գործակիցն ունեցող փոփոխականը: Հաջորդիվ իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն: Այնուհետև մոդելի մեջ հաջորդ փոփոխականն ենք ներմուծել: Եթե ավելացված փոփոխականն ունեցել է էական բացատրողականություն, թողել ենք ռեգրեսիոն հավասարման մեջ, հակառակ դեպքում՝ հանել ենք: Նույնկերպ վերլուծվել են կիրառված բոլոր փոփոխականները: Ստացված մոդելում առաջինը թողնվել է ամենամեծ կոռելյացիան ունեցող փոփոխականը՝ Ջինիի գործակիցը: Հետևելով Ֆիշերի չափանիշին և կատարված գնահատումների ամփոփ արդյունքներով պարզվել է, որ, Ջինիի գործակցից զատ, դիտարկված մյուս մակրոտնտեսական ցուցանիշների (փոփոխականների)՝ մոդել ներմուծումը նպատակահարմար չէ, քանի որ դա ոչ միայն չի ավելացնում բացատրողականությունը, այլև ավելացված նոր ցուցանիշը (գործոնը), առանձին վերցված, նշանակալի չէ Ստյուդենտի չափանիշով:

$$\boldsymbol{M} = \boldsymbol{c_1} + \boldsymbol{c_2} * \boldsymbol{G} + \boldsymbol{\varepsilon}\ , \qquad (2)$$

որտեղ՝

$\boldsymbol{M}$-ն երիտասարդների միգրացիայի թիվն է,

$\boldsymbol{G}$-ն՝ Ջինիի գործակիցը,

$\boldsymbol{c_1}, \boldsymbol{c_2}$-*ը*՝ մոդելի անհայտ պարամետրերը,

$\boldsymbol{\varepsilon}$-ն՝ մոդելի սխալը:

[49] Մարդահամարի տվյալների ճշգրտման արդյունքում՝ 2012 թվականին երիտասարդների միգրացիայի թվի դինամիկայի շարքի արժեքն անկանոն մեծ է (outlier): Այս խնդիրը լուծելու նպատակով ներմուծել ենք բինար փոփոխականը, որի շարքն ընդունել է «1»՝ 2012 թվականին, իսկ մնացած տարիներին՝ «0»: Այդպիսով՝ 2012 թվականի արժեքը ճշգրտվել է «բինար=1» փոփոխականի գործակցի արժեքով: Պաշտոնապես հրապարակված վիճակագրությունում՝ մոդելում կիրառված ցուցանիշներն ավարտվում են 2021 թվականով:

Աղյուսակ 6

«Միգրացիա-եկամուտների անհավասարություն» մոդելի գնահատման արդյունքները[50]

SUMMARY OUTPUT

Regression Statistics	
Multiple R	0.83
R Square	0.69
Adjusted R Square	0.65

ANOVA

	df	*SS*	*MS*	*F*	*Significance F*
Regression	1.00	128,044,589	128,044,589	15.94	0.01
Residual	7.00	56,222,886	8,031,841		
Total	8.00	184,267,475			

	Coefficients	*Standard Error*	*t Stat*	*P-value*
Intercept	(20,110.34)	10,639	(1.89)	0.1006
Ginnie	1,369.72	343	3.99	0.0052

Աղյուսակ 6-ից երևում է, որ եկամուտների անհավասարության (Ջինիի գործակից) գործոնով բացատրվում է երիտասարդների միգրացիայի ցուցանիշի փոփոխության մոտ 70%-ը: Ընդ որում, մոդելը, ընդհանուր առմամբ և ըստ առանձին ռեգրեսորի, նշանակալի է: Մեկ միավոր եկամուտների անհավասարության աճը հանգեցնում է 1,370 միավոր միգրացիայի ցուցանիշի աճի: Առաձգականության գործակիցը 1.9 է, որը նշանակում է՝ Ջինիի գործակցի 1%-ով աճը հանգեցնում է երիտասարդների միգրացիայի թվի 1.9%-ով աճի:

Երիտասարդների էմիգրացիան ժամանակային շարքերի մոտեցումով, մասնավորապես՝ ARIMA պրոցեսով մոդելավորելու համար ներմուծենք R ծրագրային փաթեթ հետևյալ կոդը.

```
migrar<-auto.arima(ts_data1)
> migsum<-summary(migrar)                                    (3)
> migrar:
```

Արդյունքում ստացվել է հետևյալ պատասխանը[51]՝

```
Series: ts_data1
ARIMA(1,2,0)

Coefficients:
         ar1
     -0.7854
s.e.  0.1880
sigma^2 = 20073113:  log likelihood = -157.19
AIC=318.37   AICc=319.29   BIC=319.92:
```

[50] Հեղինակների հաշվարկներ:

[51] R ծրագրային փաթեթից ավտոմատ մշակված պատասխան:

Մեկնաբանենք ստացված արդյունքները.

Ավտոմատ մոտարկման համակարգն ընտրել է ARIMA (1,2,0) մոդելը՝ երիտասարդների միգրացիայի ժամանակային շարքի մոդելավորման համար: Ստացվում է՝ միգրացիայի շարքն ունի ինտեգրման 2-րդ կարգ, և դրանում առկա է առաջին կարգի ավտոռեգրեսիոն պրոցես՝ ar1, որի գործակցի նշանը բացասական է՝ -0.7854: Սա նշանակում է, որ երիտասարդների միգրացիայի տեմպն ունի դանդաղման միտում:

Մոդելի հիման վրա կանխատեսումները ներկայացված են աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Երիտասարդների էմիգրացիայի ARIMA մոդելի կանխատեսումները[52]

Տարի	*Երիտասարդ միգրանտների թիվ*
2022	11,035
2023	12,698
2024	7,657
2025	7,881

Եզրակացություններ: Երիտասարդների միգրացիայի միտումները ՀՀ-ում 2013–2021 թվականներին ձևավորվել են սոցիալ-տնտեսական, կրթական և աշխարհաքաղաքական, տարածքային անհամաչափ զարգացման մի շարք որոշիչ գործոններով: Ընդհանուր և առանձին տարածաշրջաններում արձանագրված միտումներից երիտասարդների արտաքին միգրացիայի էական շեղումներ են արձանագրվել՝ պայմանավորված 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմի, 2020 թվականի COVID-19 համավարակի և 44-օրյա պատերազմի հետևանքներով:

Վերլուծությունից պարզ է դառնում նաև, որ ՀՀ-ում եկամուտների անհավասարությունը երիտասարդների շրջանում միգրացիայի վրա ազդող առաջնային և հիմնական գործոնն է: Հետևաբար՝ եկամուտների առավել արդարացի բաշխումը, ցածր եկամուտներ ունեցող երիտասարդների և նրանց ընտանիքների եկամուտների առաջանցիկ, կայուն աճի ապահովումը կարող է էական դրական ազդեցություն ունենալ միգրացիոն ճնշումները զսպելու և երիտասարդների շրջանում միգրացիայի հակումները նվազեցնելու առումով:

Հաջորդիվ՝ երիտասարդների միգրացիայի վրա շոշափելի ազդեցություն ունեցող գործոններ են գործազրկության մակարդակը, միջին և նվազագույն աշխատավարձերի ճեղքվածքի մեծացումը, մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը:

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և երիտասարդների էմիգրացիայի հետ դրա փոխազդեցության վերլուծությունից պարզ դարձավ, որ միայն տնտեսական աճը բավարար չէ միգրացիոն հակումները նվազեցնելու համար: Դա պետք է ուղեկցվի կենսամակարդակի և հավասար հնարավորությունների իրական բարելավմամբ:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ երիտասարդների միգրացիան ունի նաև տարածքային անհամաչափություններ: Մասնավորապես՝ կիրառված ցուցանիշների ամփոփ գնահատման

[52] R ծրագրային փաթեթից ավտոմատ մշակված պատասխան:

և ՀՀ մարզերի ու Երևան քաղաքի դասակարգման (վարկանշավորման) արդյունքում ճշտվեց, որ հետազոտվող ժամանակաշրջանում միջինում ամենավատ ժողովրդագրական իրավիճակն արձանագրվել է Լոռու մարզում է, իսկ հարաբերականորեն ամենալավը՝ Գեղարքունիքի մարզում, որոնց միջև առկա է էական տարբերություն: Մարզերի անհամաչափ զարգացումը և սահմանամերձ լինելու հանգամանքը էականորեն ազդում են միգրացիոն գործընթացների վրա: Օրինակ՝ նշված հանգամանքը Սյունիքի և Վայոց ձորի մարզերում առաջնային է բնակչության եկամուտները և բնակության պայմանները բնութագրող գործոնների համեմատությամբ:

Երիտասարդների էմիգրացիան, աշխատաշուկան ու կրթական մակարդակը բնութագրող հիմնական գործոնների և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների փոխազդեցության տատանողական, ոչ կայուն բնույթը դժվարացնում են միգրացիայի առաջացման հիմնապատճառների վերլուծությունն ու գնահատումը:

Հետևաբար՝ երիտասարդների շրջանում արտագաղթի միագործոն վերլուծությունը չի կարող որոշակի առարկայական պատկեր ապահովել: Ուստի, երիտասարդների միգրացիայի պատճառների ամբողջական բացահայտումը պահանջում է բազմագործոն մոդելային վերլուծություն:

Իրականացված բազմագործոն վերլուծության արդյունքային մոդելն արտացոլում է առաջնային կապ Ջինիի գործակցի և երիտասարդների միգրացիայի միջև: Մասնավորապես՝ կապն ուժեղ է, դրական է, զգայունության գործակիցը մեծ է մեկից՝ 1.9: Նշված արդյունքը փաստում է, որ Ջինիի գործակիցը ՀՀ-ում երիտասարդների էմիգրացիան պայմանավորող էական գործոն է:

Փորձ է արվել մոդելավորելու երիտասարդների էմիգրացիան ժամանակային շարքերի մոտեցումով, մասնավորապես՝ ARIMA պրոցեսով: Տեխնիկական վերլուծությունում, որպես գործիք, օգտագործվել է ARIMA դասի մոդելը, որը ստացվել է R ծրագրային փաթեթում առկա ավտոմատացված մոդուլի գործարկմամբ: Մոդելավորման ամփոփ արդյունքներով ստացվել է, որ ՀՀ-ում երիտասարդների էմիգրացիան առաջին կարգի ավտոռեգրեսիոն գործընթաց է պարունակում: Այն է՝ նախորդ ժամանակաշրջանի արժեքն ազդեցություն ունի, էապես պայմանավորում է ներկա արժեքը, ինչը տրամաբանական է սոցիալական գործընթացների պարագայում, և կարելի է բացատրել «սերունդների կապ» 1 լագով: Այսինքն՝ նախորդ ժամանակաշրջանում ընտանիքի անդամի միգրացիան գործնականում խթանում է հաջորդ ժամանակաշրջանում ընտանիքի մյուս անդամների միգրացիան: Ստացված պատասխանը փաստում է, որ մոդելի մնացորդները նման են «սպիտակ աղմուկ» պրոցեսին: Այսինքն՝ մոդելը լավ է մոտարկված, և թույլատրելի է կատարել կանխատեսումներ: Մասնավորապես՝ ըստ իրականացված կանխատեսումների, երիտասարդների միգրացիայի տեմպն ունի դանդաղման միտում: Այսպիսով՝ դիտարկվող ժամանակահատվածում (2013–2021 թվականներին) երիտասարդ էմիգրանտների տարեկան միջին թվաքանակը 22,199 է, իսկ 2025 թվականի համար կանխատեսվող ցուցանիշը՝ 7881, նվազումը՝ շուրջ 2,8 անգամ:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ ԿԲ կայքէջ, Վիճակագրություն, Արտաքին հատվածի վիճակագրություն, Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի, 2013–2021:
2. ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի ազգային հաշիվները, 2013–2021, https://www.armstat.am/am/?nid=82&id=2527
3. ՀՀ ՎԿ կայքէջ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2013–2021, https://www.armstat.am/am/?nid=82&id=2537
4. ՀՀ ՎԿ կայքէջ, Տարեգրքեր, Բնակչություն, 2013–2022, https://www.armstat.am/file/doc/99535998.pdf
5. ՀՀ ՎԿ կայքէջ, Միգրացիոն պատկերը Հայաստանի Հանրապետությունում, 2013–2021, https://www.armstat.am/file/article/migration_profile_am_2021.pdf
6. ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածուներ (2008–2022), https://armstat.am/am/?nid=81&pthid=demo&year=&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC
7. ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով (2008–2022), https://armstat.am/am/?nid=81&pthid=demo&year=&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC
8. ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-դեկտեմբերին (2008–2022), https://armstat.am/am/?nid=81&pthid=demo&year=&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC
9. ՀՀ ՎԿ կայքէջ, Միգրացիոն պատկերը Հայաստանի Հանրապետությունում (2008–2022), https://armstat.am/am/?nid=81&pthid=demo&year=&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC
10. ՀՀ ՎԿ կայքէջ, ԱՐՄՍՏԱՏ տվյալների բազա, բնակչության վիճակագրություն, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb
11. ՀՀ ՎԿ կայքէջ, Միկրոտվյալներ. տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազա, https://armstat.am/en/?nid=205
12. Հախվերդյան Դ., Վարդանյան Տ., Հայաստանի միգրացիոն հոսքերի համապարփակ վերլուծություն, «Բանբեր ՀՊՏՀ», N1, 2020:
13. Թադևոսյան Զ., Հակոբյան Կ., Գալոյան Դ., Աղաջանյան Լ., Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ, «Ամբերդ» մատենաշար, N4, «Տնտեսագետ», 2014:
14. R ծրագրային փաթեթ, https://www.r-project.org/
15. Елисеева И. И. и др., Статистика: учеб. 1. М.: Проспект, 2010.
16. Ackah Ch. & Medvedev D., Internal migration in Ghana: Determinants and welfare impacts. Background paper for the 2010 World Bank Ghana Poverty Assessment. WB. 2010.
17. Awumbila M., Teye J. K., Litchfield J., Boakye-Yiadom L., Deshingkar P. & Quartey P., Are migrant households better off than non-migrant households? Evidence from Ghana. Migration Out of Poverty Working Paper No. 28, 2015.

18. Bell M. & Charles-Edwards E., Measuring internal migration around the globe: A comparative analysis. Knomad Working Paper No. 3. Global Knowledge Partnership on Migration and Development, 2014.
19. Besharov D. & Lopez M., Adjusting to a world in motion. Trends in global migration and migration policy. Oxford University Press, 2015.
20. European Communities. Push and pull factors of international migration: A comparative report. Theme 1 – General statistics, Luxembourg, Eurostat, 2000.
21. FAO. FAO's Strategic Objective 3: Reduce rural poverty, 2014.
22. Ferrone L. & Giannelli G. C., Household migration and child educational attainment: The case of Uganda. IZA Discussion Paper No. 8927, 2015.
23. Ginsburg C., Bocquier Ph., Afolabi S., Otiende M., Odhiambo F., Augusto O., Béguy D., Derra K., Wak G., Zabre P., Soura A., White M. J. & Collinson M. A., Determinants of internal migration in Africa: Does human capital necessarily end up in cities? Comparative analysis of health and demographic surveillance systems. Princeton University Paper, 2014.
24. Herrera C. & Sahn D., Determinants of internal migration among Senegalese youth. New York, Cornell University, 2013.
25. Kashnitsky I., Russian periphery is dying in movement: a cohort assessment of internal youth migration in Central Russia. *GeoJournal*, 85(1), 2018.
26. Kharaishvili E., Chavleishvili M., Lobzhanidze M., Damenia N., Sagareishvili N., Problems of Youth Employment in Agricultural Sector of Georgia and Causes of Migration, International Journal of Social, Behavioral, Educational, Economic, Business and Industrial Engineering Vol:11, No:10, 2017.
27. Petrozziello A., Gender on the move: Working on the migration-development nexus from a gender perspective. Training Manual. UN Women, 2013.
28. Semiv L., Hvozdovych Y., The intellectual migration of the youth in Ukraine: the backgrounds for «brain circulation», Journal of International Studies, Vol. 5, No 2, 2012.
29. Stark O., The migration of labor. Cambridge, Basil Blackwell, 1991.
30. Taylor E. J., Migration: New dimensions and characteristics, causes, consequences and implications for rural poverty. In K.G. Stamoulis (ed.) Food, agriculture and rural development: Current and emerging issues for economic analysis and policy research. FAO, 2001.
31. Taylor E. J., The new economics of labour migration and the role of remittances in the migration process. International Migration, 37(1), 1999.
32. Thorat V.A., Dhekale J.S., Patil H.K. & Tilekar S.N. Determinants of rural-urban migration in Konkan Region of Maharastra. Agricultural Economics Research Review, 24, 2011.
33. UNICEF. Migration and youth: Challenges and opportunities. Edited by J. Cortina, P. Taran & A. Raphael on behalf of the GMG, 2014.

34. Van de Glind H., Migration and child labour – Exploring child migrant vulnerabilities and those of children left behind. Geneva, ILO–IPEC, 2010.

ТАДЕВОС АВЕТИСЯН
Доцент кафедры международных экономических отношений АГЭУ, кандидат экономических наук

АЛИК ТОРОСЯН
Аспирант кафедры теории экономики АГЭУ

ДИАНА МАТЕВОСЯН
Аспирант кафедры международных экономических отношений АГЭУ

Социально-демографические характеристики эмиграции молодежи РА и оценка взаимосвязей с макроэкономическими показателями.– С целью комплексного изучения причин внешней миграции молодежи, социальных, экономических, демографических взаимодействий в Республике Армения в рамках данной научной статьи были сгруппированы и проанализированы основные факторы возникновения внешней миграции молодежи, их взаимосвязь. На основе имеющихся статистических данных и расчетных показателей оценены социально-экономические и демографические характеристики эмиграции молодежи РА: неравенство доходов (коэффициент Джини), уровень бедности, показатели, характеризующие рынок труда и сектор высшего образования, ВВП на душу населения, валовая продукция аграрного сектора, денежные переводы из-за рубежа. Также были оценены территориальные различия миграции молодежи и демографической ситуации в целом, и, соответственно, произведен территориальный рейтинг демографической ситуации регионов с помощью агрегированных оценок. Результаты исследования показали, что существенное влияние на миграционные процессы оказывает неравномерное развитие регионов, более того, факт приграничного расположения также оказывает ощутимое влияние, а в некоторых регионах он даже доминирует над такими показателями как доходы населения и качества жизни.

Далее была оценена взаимосвязь между внешней миграцией молодежи и макроэкономическими показателями, в соответствии с чем была получена корреляционная матрица, проведен регрессионный анализ и выведена модель, выражающая связь между внешней миграцией молодежи и макроэкономическими показателями. Также, с помощью модели ARIMA были спрогнозированы будущие значения миграции молодежи РА, согласно которым внешняя миграция молодежи имела устойчивую тенденцию к снижению.

Ключевые слова: *миграция молодежи, демографическая ситуация, факторы миграции, модель ARIMA*
JEL: J11, N30
DOI: 10.52174/29538114_2023.2-143

TADEVOS AVETISYAN
Associate Professor at the Chair of International Economic Relations at Armenian State University of Economics, PhD in Economics

ALIK TOROSYAN
PhD Student at the Chair of Theory of Economics at Armenian State University of Economics

DIANA MATEVOSYAN
PhD student at the Chair of International Economic Relations at Armenian State University of Economics

Socio-demographic Characteristics of Emigration of Young People in the RA and the Assessment of Correlations with Macroeconomic Indicators.– To comprehensively examine the underlying factors driving external youth migration in the Republic of Armenia, the present paper undertakes an in-depth analysis of the intricate socio-economic and demographic interactions. The study strategically categorizes and scrutinizes the pivotal contributors to the phenomenon, emphasizing their intricate interplay. By leveraging available statistical data and key indicators, such as the Gini coefficient, poverty rates, labor market dynamics, higher education metrics, GDP per capita, agricultural sector productivity, and remittances from abroad, the socio-economic and demographic aspects of youth emigration from Armenia are systematically assessed.

This analysis also encompasses a spatial dimension, delving into the disparities in youth migration across different territories. Simultaneously, a comprehensive evaluation of demographic conditions is undertaken, culminating in an aggregated assessment that classifies regions based on their demographic prospects. Significantly, the findings spotlight the profound influence of regional imbalances on migration patterns, with border proximity emerging as a compelling determinant that often eclipses markers of income and quality of life.

Building upon these insights, the present paper proceeds to evaluate the connection between external youth migration and macroeconomic indicators. A rigorous analytical approach is employed, featuring correlation matrices, regression analyses, and model derivations to articulate the intricate relationship between the migration phenomenon and broader macroeconomic factors. Moreover, leveraging the ARIMA model, the investigation

ventures into future projections of youth migration from Armenia. Evidently, the model anticipates a consistent downward trajectory, indicating a sustained decrease in the incidence of external youth migration. In addition, the present article offers a comprehensive exploration of the multi-faceted dynamics underpinning external youth migration in the Republic of Armenia. Through meticulous analysis and rigorous statistical methodologies, it sheds light on the complex interplay between socio-economic, demographic, and macroeconomic factors, unraveling the intricate tapestry of youth migration while providing valuable predictive insights.

Keywords: *youth migration, demographic situation, migration factors, ARIMA model*
JEL: J11, N30
DOI: 10.52174/29538114_2023.2-143